ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/3486/02/24 ք. Երևան
13 Մայիսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Սերինե Խաչատրյանի, ծանոթանալով «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե» ՝ Խ Ն Դ Ր Ո Ւ Մ ԵՄ՝ Անվավեր ճանաչել՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար՝ տվյալների մշակման կենտրոնի համակարգերի կառուցման և ինժեներական կահավորման համար նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԲԿԳԿ-ՀԲՄԾՁԲ-24/48 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությունով՝ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը: պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը էլեկտրոնային համակարգի միջոցով հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար՝ տվյալների մշակման կենտրոնի համակարգերի կառուցման և ինժեներական կահավորման համար նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԲԿԳԿ-ՀԲՄԾՁԲ-24/48 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությունով՝ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության

քաղաքացիական դատարանի (այսուհետ նաև՝ Դատարան) դատավոր Ս. Խաչատրյանին մակագրվել է 06.05.2024 թվականին:
Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան և բացակայում են նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վերադարձնելու հիմքերը:
Դատարանն գտնում է, որ վեճը քննության է ենթակա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2-րդ գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում, հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանողից պահանջել գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 234-րդ և 234.6-րդ, 234.9-րդ, 199-200-րդ հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար՝ տվյալների մշակման կենտրոնի համակարգերի կառուցման և ինժեներական կահավորման համար նախագծման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված ԲԿԳԿ-ՀԲՄԾՁԲ-24/48 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 2-րդ արձանագրությունով՝ «ԱՖԻՆԱ ՊՐՈՋԵՔԹՍ» ՍՊ ընկերության հայտը մերժելու մասին անվավեր ճանաչելու պահանջի մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

2. Պատասխանող ՀՀ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ
3.1. ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
3.2. Վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
3.3. Պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների

իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:
3.4. Հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
3.5. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 21.06.2024 թվականին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Սերինե Խաչատրյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am

Digitally signed by KHACHATRYAN SERINE 6410880570
Date: 2024.05.13 09:59:26 AMT